Դործիս պատմական ու ժամանակագրական մասը մինչև 1890 և թելադրական ու խորհրդածական մասն՝ այսպէս մինչև ներկայ բարեբաղդ տարին հասցունելով՝ փութանք ուրեմն կնքել։

Բարեբաղդ, այո՛, մեծ տարին՝ ուր յարաբերական աշխարհին մէջ տեղի ունեցան ամէնէն մեծ և ուրախալուր դէպքերն ի վեպս ազգաց. — Լահէյի խաղաղութեան աշխարհաժողովն և նորագոյն սահմանադրութիւնները, տեսապէս՝ կրօնական գլուխներու և իմաստասէրներու բարի ջանքով և գործնապէս քաղաքագէտներու կայսրերու և նախագահներու փորձագէտ կարգադրութեամբ՝ այդ տիեզերական ժողովն և Թուրքիոյ նոր Սահմանադրութիւնը գրել տուած եղան միանգամ ևս քաղաքավարաց կանաչ սեղանին վրայ տիեզերական անդորրութեան և արդարութեան բեմ գիրնալ։ Այդ խաղաղութիւն և արդարութիւն՝ բանալու վրայ է մեծ հորիզոն մը վաճառական մեր աշխարհին համար ալ՝ ձաթոնէն մինչև Ամերիկա Բարեյոյսէն մինչև հիւսիսի ցուրտ բևեռն՝ հակառակ յոռետեսներու տարակոյսին։ Աշխարհի ամէնէն վաճառական ազգին՝ Բրիտանիայի անկեզծ ու համարձակ ճիգերն առ այդ, իրեն վերահսկող Պետին անդադրում գործունէութեամբ՝ ակներև գրաւական մըն են թէ այդ խաղաղութենէն և արդարութենէն ամէնէն աւելի պիտի օգտուի միջնազգային վաճառականութիւնը։ Մեր բարեբաղդ Թուրքիան ևս ունեցաւ՝ այդ խաղաղութեան և արդարութեան մէջ իր արժանաւոր ձայնն ու բաժինը՝ չնորհիւ բարեխնամ կառավարութեան և նոր Սահմանադրութեան, որով կը դառնայ աշխարհի ամէնէն բարեդէպ երկիրն ու կլիման և որուն մէջ փոքր ինչ չէ Թուրքահայոց բաստն ալ։

Թուրքիայի առևտրական հրապարակին վերջին տագնապներն ու անձկութիւնները կը թուին անցաւոր